Կարգապահական գործ ԿԳ-14111

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի փետրվարի 18-ի թիվ 40-րդ նիստ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/32-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՇՈՏ ԱՐԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայան, Լուսինե Սահակյանի, Կարեն Սարդարյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Աշոտ Արամյանին (արտոնագիր թիվ 1003) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

2014 թվականի օգոստոսի 1-ին քաղաքացի Սոնիկ Մաղաքյանը ՀՀ փաստաբանների պալատ դիմում է ներկայացրել խնդրելով կարգապահական վարույթ հարուցել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Աշոտ Արամյանի (արտոնագիր թիվ 1003) նկատմամբ և ուսումնասիրել թիվ ԵԱՔԴ/1497/02/13 քաղաքացիական գործով որպես Ալեքսանդր Միրզոյանի փաստաբանի, ոչ պատշաճ իրավական օգնություն ցույց տալու նրա վարքագիծը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 29.08.14թ. թիվ 312-Ա/ԿԳ-14111 որոշմամբ փաստաբան Աշոտ Արամյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 03.09.2014թ. ստացականով հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող Անահիտ Սարգսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Աշոտ Արամյանը (այսուհետ նաև՝ Պատասխանող) թիվ ԵԱՔԴ/1497/02/13 քաղաքացիական գործով ներկայացրել է քաղաքացի Ալեքսանդր Միրզոյանի շահերը Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Փաստաբանը ցույց է տվել ոչ պատշաճ իրավաբանական օգնություն, մասնավորապես՝ դատարանին չի ներկայացրել գործի համար էական նշանակություն ունեցող փաստաթղթեր, չի արել գործի համար անհրաժեշտ միջնորդություններ, որի արդյունքում էլ դատարանի 07.05.2014թ. վճռով Ալեքսանդր Միրզոյանի հայցը մերժվել է, հիմքում դնելով այն հանգամանքը, որ հայցվորի կողմից որևէ այլ ապացույց, այն մասին, որ առկա է հայցվորի բնակելի տուն մուտք գործելու անհնարինության հանգամանքը, չեն ներկայացվել, ինչը պարտավոր էր անել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 49-րդ հոդվածների հիմքով, ուստի դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը՝ տվյալ դեպքում հայցվոր Ալեքսանդր Միրզոյանը:

Դիմողը նաև նշել է, որ 03.04.2014թ. դատական նիստին պատասխանողն ակնհայտ դիտավորությամբ հրաժարվել է իր կողմից ներկայացված փաստաթղթերը դատարանին ներկայացնելուց, որ չի միջնորդել, որպեսզի Երևանի քաղաքապետարանը գործի մեջ ներգրավվի որպես երրորդ անձ, իսկ դրանից հետո 25.04.2014թ. ժամը 14:00-ին նշանակված դատական նիստից առաջ դատարանին գրավոր տեղեկացրել է, որ դատաքննությանը չի մասնակցի և հրաժարվում է Ալեքսանդր Միրզոյանի շահերը ներկայացնելուց, որի մասին ինքն իմացել է այլ անձինց՝ Գայանե Խաչատրյանից: Իմանալով այդ մասին, նիստի օրը իր մոտ եղած լիազորագրով գրավոր միջնորդություն է ներկայացրել դատարանին, խնդրելով, որպեսզի դատական նիստը հետաձգի և Ալեքսանդր Միրզոյանին հնարավորություն տրվի դատարանում իր շահերը ներկայացնելու համար դիմելու նոր փաստաբանի, սակայն դատարանը հրապարակելով պատասխանողի դիմումը, համարել է, որ կողմը պատշաճ ծանուցված է դատական նիստի մասին, սակայն չի ներկայացել և գործը քննել է հայցվր կողմի բացակայությամբ, ինչի արդյունքում հայցվորը զրկվել է պատշաճ իրավաբանական օգնությունից:

Այդ ամենի մասին դիմող Սոնիկ Մաղաքյանը բացատրություն է տվել ինչպես Նախապատրաստողին՝ 2014 թվականի սեպտեմբերի 29-ին, այնպես էլ Խորհրդի 18.02.2015թ. նիստին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը Խորհրդի նիստերի մասին ծանուցված լինելով Խորհրդի նիստերին չի ներկայացել և բացատրություն չի տվել, սակայն 24.09,2014թ-ին բացատրություն է տվել նախապատրաստողին, այն մասին, որ ինքը Ալեքսանդր Միրզոյանի շահերը դատարանում ներկայացրել է իր բարեկամուհի Գայանե Դավթյանի խնդրանքով, անվճար, տեղյակ է եղել, որ նախկինում էլ է համանման պահանջով գործ քննվել դատարանում, որը մերժվել է հիմնավոր ապացույցներ չներկայացնելու պատճառաբանությամբ, ուստի նոր գործով ներկայացրել է նոր ապացույցներ, մասնավորապես՝ արտակարգ իրավիճակների վարչությունից, Երևանի քաղաքապետարանից, «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի կողմից տրված փորձաքննության եզրակացությունը, որը նշում էր, թե ինչպես պետք է ճանապարհ հատկացվի, միևնույն ժամանակ հարկադիր սերվիտուտի դեպքում յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ինչքան գումար պետք է վճարվեր Ալեքսանդր Միրզոյանի կողմից: Նշել է նաև, որ որևէ այլ ապացույց ներկայացնելու անհրաժեշտություն չի տեսել, միայն հարկ է համարել միջնորդել դատարանին տեղատեսություն իրականացնել, որը բավարարվել է դատարանի կողմից: Նշել է նաև, որ տեղանքի քարտեզը դատարանին չի ներկայացրել, քանի որ չի ունեցել և անհրաժշտություն չի համարել, բացի այդ բոլոր փաստաթղթերը հավաքագրում էին Սոնիկը և Գայանեն, իսկ ինքը ուղղակի ներկայացնում էր շահերը դատարանում: Նշել է նաև, որ Սոնիկ Մաղաքյանը դատարանին ներկայացնելու համար իրենք տվել է ինչ որ պատճենահանված գծագիր, որն ինքը չի ներկայացրել դատարան, քանի որ գտել եմ, որ ներկայացված հայցապահանջին վերաբերելի չէ, բացի այդ պահանջել է նշված փաստաթղթի բնօրինակը, որը Սոնիկը ասաց, որ չունի: Պատասխանողը նշել է նաև, որ ինքը Ալեքսանդր Միրզոյանի ներկայացուցիչն էր, ոչ թե Սոնիկ Մաղաքյանի, իսկ հարցին. «Ինչու՞ չեք ներկայացել դատաքննությանը՝ պատշաճ տեղեկացված լինելով նիստի վայրի և ժամանակի մասին», պատասխանել է. «Չեմ ներկայացել դատաքննության, քանի որ մինչև դատաքննությունը գրավոր ձևով հրաժարվել եմ Միրզոյանի շահերի պաշտպանությունից»:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Վկաներ չեն հրավիրվել և ցուցմունք չեն տվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործը նախապատրաստող Ա. Սարգսյանը եզրակացություն է տվել այն մաին, որ փաստաբան Աշոտ Արամյանը թիվ

ԵԱՔԴ/1497/02/13 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում հանդես գալով որպես Ալեքսանդր Միրզոյանի շահերի ներկայացուցիչ՝ ցույց է տվել պատշաճ իրավական օգնություն, կատարվել են բոլոր անհրաժեշտ դատավարական գործողությունները, ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կարող էին հիմնավորել հայցապահանջը:

Կողմերը եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացրել:

Գործը Խորհրդին է հանձնվել 05.11.2014թ-ին:

Խորհրդի անդամ, կարգապահական գործը նախագահող Մելանյա Առուստամյանը Խորհրդի նիստ է նշանակվել 05.12.2014թ. ժամը՝19:15-ին, որի ժամանակ դիմողը բացարկ է հայտնել նախագահողին: Խորհուրդը խորհրդակցական սենյակում բացարկն ընդունել է:

Գործը վարույթ է ընդունել Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանը և Խորհրդի նիստ է նշանակել 18.02.2015թ. ժամը՝18:30-ին, Երևան քաղաքի Զաքյան փող. 2 շենք, 4-րդ հարկի 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Փաստաբան Աշոտ Արամյանը թիվ ԵԱՔԴ/1497/02/13 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում հանդես է եկել որպես Ալեքսանդր Միրզոյանի շահերի ներկայացուցիչ:

2) Թեև Ալեքսանդր Միրզոյանի կողմից լիազորագիր է տրվել Պատասխանողին, սակայն ըստ Դիմողի և Պատասխանողի բացատրությունների, այդ թվում Պատասխանողի կողմից ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննիչին տրված 19.06.2014թ. բացատրության՝ հայցը, ինչպես նաև միջնորդությունները Պատասխանողի անունից ստորագրել է Գայանե Դավթյանը:

3) Հայցի առարկան է հանդիսացել՝ պարտավորեցնել պատասխանողին սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասից հայցվորին

տրամադրել հողամասից սահմանափակ օգտվելու իրավունք՝ որպես ճանապարհ իր բնակելի տուն մուտք գործելու համար:

4) Որպես հայցը հիմնավորող ապացույցներ դատարան են ներկայացվել՝

- Երևանի քաղաքապետարանի 24.01.2013թ. թիվ 18-06/1-Մ-327 գրությունն այն մասին, որ դեռևս հստակեցված չեն քննարկվող տարածքի քաղաքաշինական կառուցապատման ծրագրերը, Վարշավյան 57 հասցեի տան մուտք տանող ճանապարհի հարցի վերաբերյալ առայժմ հնարավոր չէ եզրակացություն տալ, ինչպես նաև նշվել է, որ այդ հարցը կարող է կարգավորվել նախկինում օգտագործվող մուտքի նկատմամբ դատական կարգով հարկադիր սերվիտուտ սահմանելով.

- Երևանի քաղաքապետարանի թիվ 18-06/1-Մ-8117 գրությունն այն մասին, որ Վարշավյան 57 հասցեի բնակելի տուն տանող հողամասի ազատ տարածքը գտնվում է Վարշավյան և Սուրենյան փողոցի միջնամասում գտնվող երկաթգծի հարևանությամբ: Ներկայումս այդ տարածքում ճանապարհի համար հողամասի տրամադրում հնարավոր չէ, քանի որ դեռևս հստակեցված չեն քննարկվող տարածքի քաղաքաշինական կառուցապատման ծրագրերը:

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 29.11.2012թ. թիվ 7/17-2/6073-12 գրությունն այն մասին, որ Վարշավյան 57 հասցեի բնակիչների տան մուտք տանող ճանապարհը Երևանի քաղաքապետարանի կողմից կառուցվող նոր ճանապարհի հետևանքով ժամանակավոր դարձել է ոչ երթևեկելի:

- «Վարմօն Ռիելթի» ՍՊԸ-ի 23.07.2013թ. եզրակացությունն այն մասին, որ Երևան քաղաքի Վարշավյան 57 հասցեի բնակելի տունը երկու ճանապարհների կողմից այլ մուտք բացելու հնարավորություն չունի, ուստի մասնագիտական առաջարկվող տարբերակ է ներկայացվել նույն փողոցի 55 հասցեի հողամասի նկատմամբ սերվիտուտի սահմանումը...:

5) Քաղաքացիական գործի քննության ժամանակ Դիմողն է Պատասխանողին հուշել, թե ինչ միջնորդություններ ներկայացնի (կողմերի բացատրություն, այդ թվում պատասխանողի կողմից հետաքննիչին տրված 19.06.2014թ. բացատրություն):

6) 03.04.2014թ. դատական նիստին Դիմողը դատարանին ներկայացնելու համար Պատասխանողին է հանձնել Վաղարշյան 57 հասցեի տան և հողամասի հատակագծի պատճենը, որը պատասխանողի կողմից դատարանին չի ներկայացվել, պատճառաբանությամբ, որ այն պատճեն է, որից հետո Դիմողի և Պատասխանողի միջև տեղի է ունեցել վիճաբանություն (կողմերի բացատրություն, այդ թվում պատասխանողի կողմից հետաքննիչին տրված 19.06.2014թ. բացատրություն):

7) Հաջորդ դատական նիստը նշանակվել է 25.04.2014թ-ին, սակայն մինչ այդ 21.04.2014թ-ին Դատարան է մուտք եղել Պատասխանողի 17.04.2014թ. գրությունը, որով Պատասխանողը հայտնել է, որ նախորդ դատական նիստին

դատարանի դահլիճում է եղել նաև իր վստահորդ Ալեքսանդր Միրզոյանի բարեկամը, ազգականը, մինչ օրս իր համար անհասկանալի կարգավիճակում գտնվող Սոնա Մաղաքյանը, որի հետ վիճաբանել է, որ հայցադիմումին կից ներկայացրել է ապացույցներ, կատարվել է տեղատեսություն և դատական նիստին ներկայանալու դեպքում պետք է հղում կատարի դրանց, ուստի դատական նիստերին իր ներկայությունն ավելորդություն է և հրաժարվում է Ալեքսանդր Միրզոյանի շահերը դատարանում ներկայացնել և խնդրել է բոլոր դատական ակտերը հանձնել Սոնա Մաղաքյանին, «քանի որ նա Ալեքսանդր Միրզոյանի համար ավելի հարազատ, մտերիմ է քան թե այն փաստը, որ ես պետք է հանդես գամ, որպես ներկայացուցիչ օրենքով վստահորդի կողմից տրված լիազորությունների սահմաններում և թիվ ԵԱՔԴ/1497/02/13 քաղաքացիական գործով իմ լիազորությունները համարել դադարեցված»:

8) Պատասխանողը իր վստահորդին չի տեղեկարել իր լիազորությունները դադարեցնելու մասին:

9) Առկա է Պատասխանողի անվամբ գրված և 04.04.2014թ. թվագրմամբ միջնորդություն, կադաստրից ապացույց պահանջելու մասին, որը դատարանում չի պնդվել:

10) Քանի որ Պատասխանողը մասնակցել է 03.04.2014թ. դատական նիստին և ծանուցվել է հաջորդ դատական նիստի մասին, դատարնը 25.04.2014թ. դատական նիստին գործը քննել և դատաքննությունն ավարտել է հայցվոր կողմի բացակայությամբ:

11) Դատարանի 07.05.2014թ. վճռով հայցը մերժվել է:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 18.02.2015թ-ին տրված տեղեկանքի համաձայն 2010-2015թթ. Ընկած ժամանակահատվածում Պատասխանողի նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որը կարճվել է խախտում թույլ չտալու հիմքով:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Աշոտ Արամյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտում և ենթակա է կարգապահական պատասխանատվության, ստորև նշված պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն. «*Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը*

վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում»:

Ուսումնասիրելով կարգապահական գործի նյութերը, լսելով Դիմողի բացատրությունը, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Աշոտ Արամյանի կողմից Դիմողի հանձնարարությունը կատարելու ընթացքում կատարվել է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտում հետևյալ պատճառաբանությամբ:

Խորհուրդը գտնում է, որ երբ փաստաբանը ստանձնում է անձի իրվունքների պաշտպանությունը, եթե անգամ դա անում է անվճար, պետք է գործի բարեխիղճ, ինչը, ի թիվ այլնի, ենթադրում է նաև վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը լինելով Ալեքսանդր Միրզոյանի ներկայացուցիչը և պարտավոր լինելով նրան բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալ, թերացել է իր պարտականությունները բարեխիղճ կատարելուց և ընդունել է, որ թեև ինքն է եղել Ալեքսանդր Միրզոյանի ներկայացուցիչը, սակայն հայցադիմումը, ինչպես նաև դատարան ներկայացվող միջնորդություններն իր անունից կազմել և ստորագրել է այլ անձ՝ Գայանե Դավթյանը, որը չի հանդիսացել հայցվորի ներկայացուցիչը, ինչպես նաև փաստաբան չէ: Պատասխանողն ընդունել է նաև, որ որպես գործից քաջատեղյակ դատարանում իրեն Դիմողն է հուշել, թե ինչ գործողություններ, միջնորդություններ կատարի, ապացույցները նույնպես Դիմողն ու Գայանե Դավթյանն են ձեռք բերել և ներկայացրել:

Բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալը ենթադրում է նաև դատական նիստերին մասնակցություն, դատավարական փաստաթղթերի ստացում, այն դեպքում, երբ Պատասխանողը գրավոր դիմել է դատարանին և հայտնել, որ հրաժարվում է իր վստահորդի շահերը ներկայացնելուց, այդ մասին չտեղեկացնելով իր վստահորդին, դատարանն էլ, համարելով, որ Հայցվորը պատշաճ ծանուցվել է դատական նիստի մասին, քանի որ Ալեքսանդր Միրզոյանի ներկայացուցիչ Պատասխանողը նախորդ դատական նիստին ներկա լինելով ծանուցված է եղել դատական նիստի մասին, գործը քննել և դատաքննությունն ավարտել է Հայցվոր կողմի բացակայությամբ:

Խորհուրդը արձանագրում է, որ վերը նշված գործողությունները, ինչպես նաև Պատասխանողի կողմից 17.04.2014թ. դատարանին ուղղված գրության խնդրանքն այն մասին, որ դատարանը դատավարական փաստաթղթերն ուղարկի Ալեքսանդր Միրզոյանի ներկայացուցիչ չհամարվող և Պատասխանողի համար անհասկանալի կարգավիճակում գտնվող Սոնա Մաղաքյանին, չի կարող համարվել բարեխիղճ իրավաբանական օգնության ցուցաբերելուն ուղղված գործողություն, այլ՝ հակառակը, անբարեխղճության դրսևորում:

Խորհուրդը դատապարտում է Պատասխանողի նման գործողությունները և արձանագրում, որ Պատասխանողն իր պարտականությունները կատարել է ոչ բարեխիղճ, ինչն, այս դեպքում, նաև նսեմացնում է փաստաբանի հեղինակությունը:

Վերը նշվածը հաշվի առնելով Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառվի խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի, 39.9. հոդվածի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Աշոտ Արամյանին (արտոնագիր թիվ 1003) մեղավոր ճանաչել «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Աշոտ Արամյանին (արտոնագիր թիվ 1003) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 8 (ութ) ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Աշոտ Արամյանին և դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ **Կարեն Մեժլումյան**